ՍՈՒՐ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ
ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԱԼԳՈՐԻԹՄ

Ճառագայթային վթարի դեպքում կատարվող գործողությունների հաջորդականությունը բաղկացած է **տեսակավորման, ախտորոշման և թերապևտիկ փուլերից**:

## Տեսակավորում /տրիաժ/

<u>Առաջնային տեսակավորում</u>

1. Կենսական կարևորություն ունեցող ֆունկցիաների գնահատում

2. Վիրաբուժական միջամտության անհրաժեշտության գնահատում

<u>Ընդլայնված տեսակավորում</u>

1. Ճառագայթային էֆեկտների նախնական գնահատում բուժման տակտիկան որոշելու համար
2. Դեկոնտամինացիայի/դեկորպորացիայի անհրաժեշտության որոշում
3. Ուղեգրում առաջնային բուժ. սպասարկման /բուժ.օգնության/

## <u>Ախտորոշում</u>

- Ախտորոշիչ փուլը ընդգրկում է
- Դիտում
- Հարցուփորձ
- Զննում
- Հետազոտում
- Լաբորատոր թեստեր

Հաջորդ աղյուսակը ընդգրկում է տարբեր բժշկական խնդիրներ, որոնք պետք է կատարվեն ախտորոշման փուլում`

Կլինիկական խնդիրներ

Ճառագայթմանը բնորոշ վաղ ինֆորմացիա

Ճառագայթմանը բնորոշ հետագա ինֆորմացիա

## ԱԽՏՈՐՈՇՈՒՄ

Ընդհանուր առողջական վիճակի գնահատում
Արտաքին տրավմա, այրվածքներ

**ԴԻՏՈՒՄ**

Լուծ
Փսխում
Գիտակցության գնահատում

Հիմնական գանգատներ
Հիվանդության պատմություն
Դեղորայքային անամնեզ
Ալերգիկ անամնեզ
Վթարի նկարագրում

**ՀԱՐՑՈՒՓՈՐՁ**

Փսխում
Լուծ
Թուլություն
Գիտակցության գնահատում

---

Սրտխառնոց
Փսխում
Անորեքսիա
Լուծ
Հոգնածության համախտանիշ
Նևրոլոգիական դեֆիցիտ
Գլխացավ
Աբդոմինալ ցավ
Կոգնիտիվ դեֆիցիտ
Արյունահոսություն
Քոր
Մազաթափություն

Մաշկի զննում
ոտքից գլուխ

**ԶՆՆՈՒՄ**

Էրիթեմա

---

Էրիթեմա
Բշտերի առաջացում
Այտուց
Դեսկվամացիա
( թեփոտում )
Խոց/նեկրոզ
Պետեխիաներ
Մազաթափություն
Օնիխոլիզիս

Ֆիզիկալ հետազոտում /ոտքից գլուխ/
ԷԷԳ
ԷՍԳ
Իմիջինգ թեստեր
Դոզիմետրիա

**ՀԵՏԱԶՈՏՈՒՄ**

Մարմնի ջերմության բարձրացում
Նևրոլոգիական դեֆիցիտ

---

Մարմնի ջերմության
բարձրացում
Նևրոլոգիական դեֆիցիտ
Հիպոտենզիա
Քոր
Կոգնիտիվ դեֆիցիտ
Ինֆեկցիա
Արյունահոսություն

Արյունաբանական թեստեր
Արյան անալիզ
Լեյկոֆորմուլա
Մարդկային լեյկոցիտար հակագենի որոշում
Ցիտոգենետիկ անալիզ
Ոսկրածուծի պունկցիա
Կենսաքիմիական թեստեր
Մանրէաբանական թեստեր

**ԼԱԲՈՐԱՏՈՐ ԹԵՍՏԵՐ**

Լիմֆոցիտների փոփոխություններ
Գրանուլոցիտների փոփոխություններ

---

Լիմֆոցիտների փոփոխություններ
Գրանուլոցիտների փոփոխություններ
Թրոմբոցիտների փոփոխություններ
Կղանքի բնորոշում
Թաքնված արյուն

**Ճառագայթային վնասվածքների վաղ ախտանշանների վրա հիմնված կառավարման ուղեցույց**

| Կլինիկական ախտանշաններ | | Համապատասխան դոզա (Gy) | | Որոշում |
|---|---|---|---|---|
| Ամբողջ մարմնի ճառագայթում | Լոկալ ճառագայթում | Ամբողջ մարմնի ճառագայթում | Լոկալ ճառագայթում | |
| Փսխումը բացակայում է | Վաղ էրիթեման բացակայում է | <1 | <10 | Ամբուլատոր հսկողություն 5 շաբաթվա ընթացքում /արյուն, մաշկ/ |
| Փսխում ճառագայթումից 2-3 ժամ հետո | Վաղ էրիթեմա կամ ոչ նորմալ զգացողություն /պարեստեզիա/ ճառագայթումից 12-24 ժամ հետո | 1-2 | 8-15 | Հսկողություն հիվանդանոցում /կամ ամբուլատոր 3 շաբաթվա ընթացքում  հետագա հոսպիտալացումով անհրաժեշտության դեպքում/ |
| Փսխում ճառագայթումից 1-2 ժամ հետո | Վաղ էրիթեմա կամ ոչ նորմալ զգացողություն /պարեստեզիա/ ճառագայթումից 8-15 ժամ հետո | 2-4 | 15-30 | Հոսպիտալացում արյունաբանական կամ վիրաբուժական /այրվածքային/ բաժանմունք |
| Ճառագայթումից հետո 1ժամից ավելի վաղ առաջացած փսխում և/կամ այլ ծանր ախտանշաններ /օրինակ` հիպոտենզիա/ | Վաղ էրիթեմա ճառագայթումից հետո առաջին 3-6 ժամվա ընթացքում կամ ավելի վաղ, մաշկի և/կամ լորձաթաղանթների այտուցով: | >4 | >30 | Հոսպիտալացում լավ հագեցած արյունաբանական կամ վիրաբուժական բաժանմունք հետագա տեղափոխումով մասնագիտացված ռադիոպաթոլոգիայի կենտրոն |

**Հետազոտությունների հաճախականություն**

| | |
|---|---|
| Պատասխանի կատեգորիա /ՊԿ1/ Թեթև խանգարումներ | Օրգան-համակարգերի ամբողջական հետազոտություններ յուրաքանչյուր 24 ժամը մեկ /6 օրվա ընթացքում/: Դրանից հետո` շաբաթը 1 անգամ: Վերջնական գնահատականը ճառագայթման 60-րդ օրը: |
| ՊԿ2 Միջին ծանրության | **Առանց կլինիկական բարդությունների** /արյունահոսություն, ինֆեկցիաներ և այլն/, օրգան-համակարգերի ամբողջական հետազոտություններ յուրաքանչյուր 24 ժամը մեկ /6 օրվա ընթացքում/: Դրանից հետո` շաբաթը 1 անգամ:<br>Եթե **առկա են կլինիկական բարդություններ`** յուրաքանչյուր 12 ժամը մեկ /մինչև ախտանշանների ստաբիլիզացիան/: Դրանից հետո շաբաթը մեկ: Վերջնական գնահատականը ճառագայթման 60-րդ օրը: |
| ՊԿ3 Ծանր խանգարումներ | **Առանց կլինիկական բարդությունների** /արյունահոսություն, ինֆեկցիաներ, գիտակցության խանգարումներ և այլն/, օրգան-համակարգերի ամբողջական հետազոտություններ յուրաքանչյուր 12 ժամը մեկ /մոտավորապես 6 օր/: Դրանից հետո` օրը մեկ անգամ /ընդհուպ մինչև 30 օր/: Միայն ապաքինման նշանների ակնհայտության դեպքում կարելի է շաբաթը մեկ անգամ:<br>**Կլինիկական բարդությունների առկայության դեպքում`** յուրաքանչյուր 6 ժամը մեկ / մինչև ախտանշանների ստաբիլիզացիա/: Դրանից հետո` պետք է գործել ինչպես նկարագրված է ՊԿ3 առանց կլինիկական բարդությունների: Վերջնական գնահատականը ճառագայթման 60-րդ օրը: |
| ՊԿ4 Ծայրահեղ ծանր խանգարումներ | Օրգան-համակարգերի ամբողջական հետազոտությունները յուրաքանչուր 6 ժամը մեկ /մոտավորապես 3օրվա ընթացքում, կասկածելի դեպքերում կամ կլինիկական բարդությունների առկայության ժամանակ մոտավորապես 6 օրվա ընթացքում/: Դրանից հետո` օրը մեկ անգամ: Միայն եթե ակնհայտ են ապաքինման նշանները և լրացուցիչ բարդություններ չեն առաջանում` ամեն 2 կամ 3 օրը մեկ, կամ շաբաթը մեկ: Վերջնական գնահատականը ճառագայթման 60-րդ օրը: |

# Թերապևտիկ փուլ

**Թերապևտիկ սկզբունքներ**

<table>
<tr><td>Ամբողջ մարմնի դոզան (Gy)</td><td>1-2</td><td>2-4</td><td>4-6</td><td>6-8</td><td>>8</td></tr>
<tr><td>Սուր ճառագայթային հիվանդության ծանրության աստիճանը</td><td>Թեթև</td><td>Միջին</td><td>Ծանր</td><td>Ծայրահեղ ծանր</td><td>Լետալ</td></tr>
<tr><td>Բժշկական կառավարում և բուժում</td><td>Ամբուլատոր հսկողություն /մաքսիմում 1 ամիս/</td><td colspan="4">Հոսպիտալացում</td></tr>
<tr><td></td><td></td><td colspan="4">Մեկուսացում, որքան հնարավոր է շուտ</td></tr>
<tr><td></td><td></td><td colspan="2">G-CSF կամ GM-CSF որքան հնարավոր է շուտ /կամ առաջին շաբաթվա ընթացքում/</td><td colspan="2">Ինտերլեյկին – 3 և GM-CSF</td></tr>
<tr><td></td><td></td><td colspan="4">Լայն սպեկտրի հակաբիոտիկներ /լատենտ շրջանի վերջում/<br>Հակասնկային և հակավիրուսային պրեպարատներ /անհրաժեշտության դեպքում/</td></tr>
<tr><td></td><td></td><td colspan="4">Արյան բաղադրիչների տրանսֆուզիա /անհրաժեշտության դեպքում/</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td colspan="3">Լիարժեք պարենտերալ սնունդ /առաջին շաբաթ/<br>Մետաբոլիզմի կորեկցիա, դետոքսիկացիա /անհրաժեշտության դեպքում/</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td colspan="3">Պլազմաֆերեզ /երկրորդ կամ երրորդ շաբաթ/<br>Տարածուն ներանոթային կոագուլյացիայի պրոֆիլակտիկա /երկրորդ շաբաթ/</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td>Մարդկային լեյկոցիտար հակագեն – իդենտիկ ոսկրածուծի ալոգեն տրանսպլանտացիա /առաջին շաբաթ/</td><td>Միայն սիմպտոմատիկ թերապիա</td></tr>
</table>

**Օգնության թերապևտիկ և կազմակերպչական մակարդակները**

Հաջորդ նկարում պատկերված է կարճ ակնարկ ճառագայթային վթարներից տուժածների օգնության թերապևտիկ և կազմակերպչական մակարդակների մասին

Կլինիկական օգնության անհրաժեշտությունը

| Պատասխանի կատեգորիա (արձագանք) | Թերապևտիկ միջամտություններ | Կազմակերպչական անհրաժեշտ պայմաններ |
|---|---|---|
| ՊԿ 4 Լիարժեք ապաքինումը անհնար է + | Ցողունաբջջային տրանսպլանտացիա | Մասնագիտացված հիվանդանոց ինտենսիվ բժշկության բոլոր բնագավառներում աշխատանքի փորձով (մասնավորապես պլոգեն ցողունաբջջային տրանսպլանտացիայի փորձով) |
| ՊԿ 3 Լիարժեք ապաքինումը հնարավոր է + | Խթանում /թերապիա աճի գործոնով/ | Արյունաբանական - օնկոլոգիական կենտրոններ ռեվերսիոն մեկուսացումով, ինտենսիվ օգնության բաժանմունքներ, բոլոր բժշկական մասնագետների խորհրդատվություններ: |
| ՊԿ 2 Լիարժեք ապաքինումը հավանական է + | Աջակցող օգնություն; Փոխարինող թերապիա /արյան բաղադրիչներ/ | Թերապևտիկ բաժանմունքներ արյունաբանա-օնկոլոգիական, նյարդաբանական և մաշկաբանական խորհրդատվության ծառայություններով |
| ՊԿ 1 Լիարժեք ապաքինումը անկասկած է | Ընդհանուր աջակցություն ապաքինման պրոցեսներին, սովորաբար ոչսպեցիֆիկ թերապիա | Ամբուլատոր բուժում կամ ընդհանուր թերապևտիկ բաժանմունք |